



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-28-77

թիվ _____

« _____ » _____ 2017թ.

« Հետք » էլեկտրոնային թերթի Լոռու մարզի
թղթակից Լ.Փարեմուզյանին

Ի պատասխան Ձեր 04.07.2017թ. էլեկտրոնային գրությանը

Հարգելի տիկին Փարեմուզյան

Հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 7 հրատապ ծրագրերի շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանին ճանապարհաշինության ոլորտում աշխատանքներ իրականացնելու համար հատկացվել է 2081մլն դրամ գումար, ընդ որում, Վանաձոր համայնքին ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման և ընթացիկ նորոգման համար՝ 967.2մլն դրամ, Ալավերդի համայնքին՝ 177.1մլն դրամ, Սպիտակ համայնքին՝ 167.2մլն դրամ, Ստեփանավան համայնքին՝ 233.0մլն դրամ, Տաշիր համայնքին՝ 149.1մլն դրամ, այլ համայնքներին՝ 387.4մլն դրամ: Վանաձոր համայնքում հիմնանորոգվել կամ ընթացիկ նորոգման աշխատանքներ են իրականացվել հետևյալ փողոցներում.

2011թվականին՝ Սպանդարյան, Ստեփանյան, Կնունյանց, Աճառյան, Մաշտոցի, Համբարձումյան, Տավրոսի 7-րդ, Տավրոսի 20

2012թվականին՝ Արաբկիր, Ճավճավաձե, Ղուկասյան, Շիրվանզադե, Կամոյի, Սուխումի, Ռուսթավի, Իսահակյան, Ուկրաինական և Տավրոսի 6

2013թվականին՝ Տ.Մեծի պողոտա, Մայր Աստվածածին եկեղեցու հարակից տարածք /1-ին փուլ/, Ազատամարտիկների, Ուսանողական, Շիրվանզադեի, Տաթևի, Զոր.Անդրանիկի 3-րդ նրբանցք,

2014թվականին՝ Թումանյան, Սրտաբանական հիվանդանոց տանող ճանապարհ,
Մայր Աստվածածին եկեղեցուն հարակից տարածք /2-րդ փուլ/,

2015թվականին՝ Խնձորուտ-Բազում թաղամասի գերեզմանոցի նախահրապարակի և
այն գերեզմանոցին կապող ճանապարհահատված,

2017թվականին՝ Վանաձոր համայնքի ինֆեկցիոն հիվանդանոց տանող փողոց,
Տպագրիչների, թիվ 10 դպրոցի արևելյան կողմի փողոց, Ներսիսյան նրբանցք:

Ինչպես երևում է վերը նշված փողոցների ցանկից, ճանապարհաշինական
աշխատանքներ իրականացվել են Վանաձոր համայնքի բոլոր մասերում: Վանաձոր
համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգման համար յուրաքանչյուր տարի
100մլն դրամ հատկացման հարցի վերաբերյալ առաջարկում եմ դիմել Վանաձորի
քաղաքապետարան:

7-րդ հրատապ ծրագրով ճանապարհաշինական աշխատանքներ իրականացնող
կազմակերպություններն են. «Շինպլուս» ՍՊԸ՝ Վանաձոր համայնքի փողոցների
վերանորոգման աշխատանքներ, «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ՝ Վանաձոր համայնքի ինֆեկցիոն
հիվանդանոց տանող փողոց, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ՝ Ալավերդի համայնքի
փողոցների վերանորոգում, Վանաձոր համայնքի 9-րդ դպրոցին հարակից կամրջի
վերանորոգում, «Հիդրո» ՍՊԸ՝ Տաշիր համայնքի փողոցների վերանորոգում, «Արիովշին»
ՍՊԸ՝ Ստեփանավան համայնքի փողոցների վերանորոգում:

Ճանապարհաշինական կազմակերպություններն ընտրվել են «Գնումների մասին» ՀՀ
օրենքի հիման վրա իրականացված մրցույթով:

ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

 Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ